ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 0306/1811 25.04.2018թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը ՀՀ Ոստիկանության տարբեր ստորաբաժանման ՁՊՎ-ներ այցելելու ընթացքում պարբերաբար առնչվել է տհաճ մի երևույթի հետ, դա է՝ ՀՀ Ոստիկանության բաժնում առաջինը Դիտորդական խմբին դիմավորող ոստիկանները տեղյակ չեն Դիտորդական խմբի գոյության, ավելորդ է ասել, Խմբի գործունեության սկզբունքներին, դիմավորում են շատ առհամարական և ագրեսիվ: Հաջորդիվ ղեկավար մարմիններին զեկուցելով Դիտորդական խմբի այցելության մասին համապատասխան հանձնարարություն ստանալուց հետո, փորձում են լինել բարեհամբույր և նոր թույլ են տալիս Դիտորդական խմբին մուտք գործել տվյալ բաժնի տարածք:

Դիտորդական խմբի ներկայացվածի բուն մտահոգությունը կայանում է նրանում, որ տվյալ ոստիկանները ՀՀ ցանկացած քաղաքացու դիմավորում են նույն ձևով, որի իրավունքը նրանք չունեն:

Այսպիսով, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել (սեմինար-պարապմունքների կամ իրազեկման միջոցով) և փորձել տվյալ խնդիրը վերացնել ՀՀ Ոստիկանության բաժիններում:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏԱՐՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ թիվ 1037
«02» 05 2018թ.

ՀՀք.Գյումրի 3123,Կ.Սարգսյան 13
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 77) 86 99 66
E-mail: info@policemonitoring.org